

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործավարություն

2013 թ. -ի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 109 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 613 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 161 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 25 որոշում: Արձակվել է 81 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն

2013 թ.-ի ընթացքում համայնքի ավագին գումարել է 4 արտահերթ և 6 հերթական նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, մասնավորապես կատարվել է բյուջեյի փոփոխություններ և լրացումներ համայնքի 2013 թվականի բյուջեում: Ավագանու քննարկման են ներկայացվել 72 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3.Գյուղատնտեսության ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են՝

Բնակավայրային նշանակության հողեր -320հա.

Գյուղ. նշանակության հողատարածք -564 հա, որից՝

Խաղողի այգի -5.1 հա

Պտղատու այգի -14.8հա

2013 թվականին աշնանը կատարվել է 20.86հա հացահատիկի, 7,0հա բազմամյա խոտհարքեր:

Անասնազվիսաբանակ

Խոշոր եղջերավոր անասուններ 305 գլուխ, որից՝ կովեր 102 գլուխ

Մանր եղջերավոր անասուններ 96 գլուխ, ոչխար, որից՝ մայրեր 19

84 գլուխ խոզեր, որից մայրեր՝ 8

Մեղվաբնտանիք -15, թռչուն -4819

4. Հողի հարկ և գույքահարկ.

2013 թվականին համայնքային բյուջեով նախատեսվել է 4433,0 հազար դրամ հողի հարկ: 28.12.2013 թ.-ի դրությամբ համայնքի հողօկտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 40906,3 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 110,7 տոկոսը:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 5880,0 հազար դրամ: 28.12.2013 թվականի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 3492,8 հազար դրամ, որը կազմում է տարեկան գույքահարկի 59,4% -ը :2013 թվականի բյուջեով նախատեսվել է 102,2 հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ մուտք չի գանձվել: 2013 թվականի բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 36819,8 հազար դրամ , որը ֆինանսավորվել է 100 % ով, համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարը նախատեսվել է 1015,0 հազ. դրամ, գաձվել 564,3 հազ. դրամ: 2013 թվականի բյուջեում սեփական եկամուտները նախատեսվել են 11430,2 հազար դրամ, 28.12.2013 թ. դրությամբ սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 8971,2 հազար դրամ: Սեփական եկամուտները կատարվել են 78,5 %-ով: 2013 թվականին պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեյին տրամադրվող նպատակային հատկացումներ/տուրվենցիա/ 623,0 դրամ:

Ծախսեր

- Ջրատափ գյուղապետարանը 01.01.2013թ.-ից մինչև 28.12.2013.թվականը կատարել է հետևյալ ծախսերը:
1. վճարել է ընթացիկ աշխատավարձ 19571,5 հազար դրամ
 2. կատարել է թերթի բաժանորդագրության ծախս - 130,0 հազար դրամ
 3. մասնագիտական ծառայության համար փոխանցվել է -653,1 հազար դրամ
 4. համակարգչային ծառայության համար փոխանցվել է -187,6 հազար դրամ
 5. փոխանցվել է էլեկտրոններգիայի գումար -2933,0 հազար դրամ
 6. փոխանցվել է գազի օկտագործման գումար - 450,0 հազար դրամ
 7. միջոցառումների համար` պատերազմի մասնակիցների համար ֆուրջետի սեղանի համար 180,0 հազար դրամ, 400,0 հազար դրամ տրվել ավարտական դասարանների համար նվերներ, առաջին դասարանցիների համար 320,0 հազ. դրամ և 50,0 հազ դրամ մանկապարտեզին:
 - 8 մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդյա - 11841,0 հազար դրամ
 - 9 գրեական պիտույքներ ձեռք բերելու համար փոխանցվել է -300 հազար դրամ
 10. անապահով ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն -2000,0 հազար դրամ
 11. խորքային հորերի պոմպեր, վարչական սարքավորումների համար ծախսվել է 1486,7 հազար դրամ :
 12. գյուղապետարանի շենք վերանորոգու 1200,0 հազար դրամ:
 13. ներայացուցչական ծախսեր 900,0 հազար դրամ:
 14. հուշարձանի վերանորոգման ծախսեր -200,0 հազար դրամ:
 15. աղբահանություն -2800,0 հազար դրամ:
 16. կենցաղային նյութեր -600,0 հազար դրամ:
 17. կապի ծառայություն -499,0 հազար դրամ:
 18. ներքին գործուղում -463,0 հազար դրամ:
 19. հատուկ նպատակային նյութեր-266,0 հազար դրամ:

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3217 մարդ:
2013 թվականի էկրորդ կիսամյակի ընթացքում Ջրառատ համայնքում ծնվել է 26 երեխա, գրանցվել է 14 մահ:

Ընտանեկան նպաստ ստացողներ 45 ընտանիք

Համայնքում թոշակառուները 311 հոգի են:

5. Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց 316 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 60 երեխայով և 11 աշխատողով:

6 Մշակույթ

Համայնքը ունի մեկ մշակութի տուն 3 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով:

Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 35 երիտասարդով և սպորտի խմբակներ բոնցկամարտի, մարտեր առանց կանոնների և ծանրամարտ:

7 Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 11 աշխատողով:

8 Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2013 թ-ի աշնանային զինակոչը և կատարվել է պլան առաջադրանքը:

9. Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են Հ. Հ. պետական տոները և հիշատակի օրերը: Ըստ հարկի նշվում և կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության սահմանադրության օրը:

Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգում (հարթեցում, ավազապատում), որը կկազմի մոտ 20.000.000 ՀՀ դրամ

բ) Վերանորոգման կարիք ունի նաև գյուղապետարանի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 10.000.000 ՀՀ դրամ

գ) Մշակույթի տունտ 15000000հազար դրամ:

Դ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի արտիզյան ջրհորների հորատման և էլեկտրաֆիկացման հարցը, որի համար կծախսվի մոտ 25.000.000 Հ. Հ. դրամ:

Ջրատառի գյուղապետ՝



Ս. Գալստյան